

2219
L. XI. 3

(Diverse)
18, P

Թարգմանում . . . 14 զուան
Գրառումներում . . . 20 զուան

Թուրքական . . . 4 թ. 50 Կ.
Թուրքիա . . . 50 զուան
Եւրոպա . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . 2 տոլար 50 Կ.
Յայտարարութիւնների վճարը՝
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորքողը . . . 5 »

ԱՌՆՆՁԻՆ ՀԱՄԱՐ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏԻՆ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ԱՂԳԱՅԻՆ—ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՒ ԲԱՍՏԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՏԻՆ

Ազգային—Հասարակական—Գրական և Քաղաքական

ՇԱՐԱԹ ԱՌՆՆՁԻՆ

1912 թուի համար.

Թաւրիզում տարեկան	14 զուան
„ վեցամսեայ	8 „
„ երեք „	5 „
Գաւառներում տարեկան	20 զուան
„ վեցամսեայ	12 „
„ երեք „	7 „

Ա. ր. տ. ա. ս. հ. մ. ա. ն.

Թուրքական	4 թ. 50 Կ.
Եւրոպա և Եգիպտոս	12 ֆրանկ
Տաճկաստան	50 զուան
Ամերիկա	2 տոլար 50 սենթ

Յայտարարութիւններ ընդունուած են ամեն լեզուներով. յայտարարու-
թեանց համար վճարուած են իւրաքանչիւր տողատեղին՝ (պետիտ) առաջին երե-
սի վրայ 10 շահի, վերջին երեսի վրայ 5 շահի: Շարունակական յայտարարու-
թեանց համար առանձին պայման:

Խմբագրի հետ տեսնուել կարելի է, չորեքշաբթի և օրն օրերից բացի,
ամեն օր երեկոյեան ժամը 4 5 իւր բնակարանում, տուն Օհանջանի, Թաւրիզ
մէջընտում, Ռուսական հիւպատոսարանին մերձ:

Բաժանորդագրի և յայտարարութիւնների վճարն անպայման ԿԱՆԻՍԻԿ
Հաստատման Թաւրիզում 6 շահի:

Մեր հասցէն՝ Rédaction du journal „Mitk“ Tauris (Perse)
Հեռագրի հասցէ՝ Rédaction „Mitk“ Tauris.

Խմբագիր—Հրատարակիչ՝
Ալեքսանդր Տէր Վարդանեանց

Ժողովրդական դատարան-
Մեր ԽՈՍՏՐԸ րակչութեան չորս սերը
միտում է մեզ նորէն ղէպի
հրապարակախօսական պատուաւոր գոր-
ծունէութիւն:

Հայ անհիւրընկալ իրականութեան
մէջ այդ գործունէութիւնը հալածանքից
բացի ոչ ոքի համար փափուկ դրութիւն
չի ստեղծել: Եւ ամենին այդ անկա-
լութեամբ էլ չէ, որ մենք ասպարէզ ենք
իջնում մեր «Միտք»-ով Ամենաթեմի մի
ծառայութիւն մեր ժողովրդի մտաւոր
ու հոգեկան զարգացման բարոյական
և նիւթական յառաջդիմութեան հար-
ցերում, կրնի մեզ համար լուսաւոր մի
հատուցում, եթէ անգամ, ըստ առաջ-
նոյն, մեզ պատասխանելու լինին մագ-
ձոտ ու թանաւոր հոգիների ստոր դա-
ւերը՝ մեր անվերապահ և համարձակ
ճշմարտախօսութեան պատճառով:

Մենք հրապարակ ենք գալիս ան-
կախ որ և է կուսակցութիւնից, մեն

մենակ և մեր իսկ ձեռնդրեցութեամբ
եւ մեր ձեռնարկի յարատեւութիւնը մենք
տեսնում ենք միայն մի մարտի գոր-
ծունէութեան և ընթերցող զասի հա-
մակցութեան մէջ:

Մենք կուսակցական կամ քա-
ղաքական ձգտումներ չունինք և հետա-
մուտ էլ չենք այդպիսի նպատակների:
Մեզ ոգևորողը, մեր կուսակցութիւ-
նը—դա ինքը իրաւագործ հայ ժողո-
վուրդն է: Յանձնուած տառապած, կոյր
առաջնորդների և քաղաք գլուխների յա-
կապի տուժած հայ ժողովուրդը, որ
մերձ ի մահ հեռու է տղիտութեան կօշ-
մարից, որ օր աւուր հիւժուած է ներ-
քին ու արտաքին հարուածներից, բար-
բիւրի անկուսից և կորցրած իւր ազգա-
յին ջախջախ նաւի ղեկը, քչում է անո-
րոշ հորիզոններ, իւրաքանչիւր ընդ-
նթակայ փոթորիկ սպառնալիքի և ծո-
վամայն լինելու վտանգի:

Մեր ոյժերով և մեզ ներած պայ-
մաններով՝ ուսուցանել այդ մեծ տա-
ռապիւղին և մանաւանդ նրա Պարսկա-
հայ հատուածին խոհեմ գործելակերպ,
մտքնել մարքութիւն նորա ընկած բար-
բիւրի, կենդանութիւն՝ վնասած հոգու,
հուր՝ նրա մարած սրտի մէջ, հետաքրք-
րութիւն՝ ղէպի նրա անցեալի ու ներկայի
ուսումնասիրութիւնը և այդպիսով հար-
թել այդ ժողովրդի համար ուղիղ
ճանապարհ ղէպի խաղաղ ու կուլ-
տուրական զարգացում, ղէպի լուրջ ու
շինարար աշխատանք—անհ մեր նպա-
տակը:

Ուստի սոյն իղէալներով ոգևորուած
մեր մտաւորականներին և մեր ձեռնար-
կը համագործակցութիւն կոչ ենք անում բա-
րոյապէս և նիւթապէս աջակցելու մեզ՝
մեր զօրութիւն գործում: Կոչ ենք ա-
նում մեր թարմ ու առողջագետ ոյժե-
րին ղէպի զրական ասպարէզ՝ մեր խա-
ւար ու յետամնաց, բայց ընդունակ և
կորովի, ժողովրդին ղէպի լուրջ, ղէպի
շարժունութիւն և ղէպի հասարակական
կենդանի գործունէութիւն առաջնորդե-
լու:

Եւս այն դաշտը, ուր իջնում ենք
կործնելու, անհ և մեր պարզած դրօշը,
որի վրայ արձանագրուած է յառաջդիմու-
թիւն, նախաձեռնութիւն եւ աշխատանք:

ԽՄԲԵՐՈՒԹԵՆ ԿՈՂՄԻՏԵ

1. Բոլոր խմբագրութիւններից, ո-
րոնց թիւթերի յայտարարութիւնը մենք
տպել ենք ներկայ համարում և կտպենք
այսուհետեւ, ինչպէս ենք ազնուօրէն բա-
րի լինել նոյնքան անգամ փոխադարձա-
բար ծանուցանել և մեր թիւթը, կատա-
րելով միաժամանակ կանոնաւոր և ան-
խափան փոխանակութիւն մեր թիւթի
հետ:

2. Թաւրիզի մեր յարգոյ բաժանորդ-
ներից և թիւթի ստացողներից եւ խըն-
դրուած ենք կամ փութան ինքեանք հէնց
առաջին համարն ստանալուց յետոյ
վճարել մեզ կամ բարեհաճին առաջին
իսկ պահանջին բաժնեկիներ յանձնել մեր
գանձաղին, առանց այլ ևս սովորական
«այսօր կուցուան» բցիւր և մեզ դրժ-
աւարութիւններ պատճառելու:

3. «Միտք»ին աշխատակցելու հրա-
ւիրուած են քաղաքումս եղող բարձր և
բարձրագոյն կրթութիւն ստացած մար-
դիկ, հմուտ եւրոպական և մանաւանդ
անգլիական գրականութեան:

Մեր գեղարուեստական գրականու-
թեան որոշ ծառայութիւն մատուցած
լինելու համար «Միտք»-ում թարգմանա-

1. Սեզ գրողներից ինչպիսիք գրեն պարզ,
մարտի և անպայան բղբի առաջին երեսի
վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում ի-
րաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխու-
թեան և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք «Ի» և «Վ» ի ուղղագ-
րական հերձուածը և մեզ ենք վերապահում
իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր
ընդունած ուղղագրութեամբ—ու—ով:
4. Չապուած կարճ յօդուածները չեն վերա-
դարձնում: Ուղարկուած և չապուած երկար
նիւթերը յետ ստանալու համար պէտք է ու-
ղարկել պօստի ծախսը:
5. 2ի ապուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ
անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածա-
գրի իսկական սնունդ ազգանունը:
6. Բաժանորդները թիւթ չստանալու դէպ-
քում չուսով տեղեկացնելու են մեզ հակառակ
ղէպում խմբագրութիւնս իրեն գերծ է հա-
մարում պատասխանատուութիւնից:
7. Չապուած յօդուածների համար խմբագ-
րութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ
ուղարկել 2 զուան 10 շահի:

բար տպելու և ապա առանձին գորոյկով
հրատարակելու ենք աշխարհիս ամենա-
առաջնակարգ և ամենամեծ բանաստեղծ
ՌԻԼԻՔՏ ԶԵՖԵՍՊՈՐԻ թատերական հռչակա-
ւոր մի երկը—ՅՈՒԼԻՍՈՒՍ ԿԵՍԵՐ-որոշերգութիւ-
նը:

Թարգմանութիւնը կատարուելու է
բուն իսկ բնագրից—Անգլիերէնից:

«Միտք»ի Թաւրիզի բաժանորդները,
եթէ կամենան, այդ հրատարակութիւնը
կատանան բաժնեկի վրայ աւելացնելով
միայն 4 զուան: Թաւրիզից դուրս գտնը-
ուող բաժանորդները, բաժնեկից գատ,
վճարելու են 5 զուան: Իսկ «Միտք»-ի ոչ
բաժանորդների համար ՅՈՒԼԻՍՈՒՍ ԿԵՍԵՐ
կտրծեայ 10 զուան: Բաժանորդագրու-
թիւնը փակուելուց յետոյ, գրքի արժէքը
կբարձրանայ:

ՊԱՐԱԿԱՍՏԱՆ

Ըստ անգլիական տեղեկութեանց, մօ-
տիկ ապագայում նշանաւոր բարեօրոշմե-
տեղի կունենան պարսկական գործերի դը-
րութեան մէջ, շնորհիւ Անգլ-Ռուս կա-
կառավարութեանց միացեալ աջակցու-
թեան: Անգլիաներում Լորդ Մօրլէի և
Սըր Էջուարդ Դրէի խօսած ճառերից ե-
րեսաց, որ երկու պետութեանց մէջ կա-
տարուած են բանակցութիւններ՝ ընդհելու
մի շինարար քաղաքականութիւն Պարսկաս-
տանը գործողներու նպատակով և պայ-
պիսով ընդունակ դարձնելու նորան [Պարս-
կաստանը] վերականգնելու կարգը, որպէս
զի ներկայումս Պարսկաստանում՝ եղող
Ռուս-Անգլ-գործերը լիտ քաշուեն այլ ևս:
Այդ ճառերից երեսաց, որ միացեալ կա-
ռավարութիւնները 400,000 ֆ. ստանլին-
զի մի գումար պիտի փոխ տան Պարսից:
գանձարանին: Եթէ այս առթիւ համաձայ-
նութիւն կայանայ, այն դէպքում գումարի
կէտը աւելու եւ Անգլիացիք և կէտը Ռուս-
ները:

ՌՈՒՍԵՍՏԱՆԸ ԵՒ ԷՍԵՆՏԱՆԸ

Մի առաջագործիւն պատից կառա-
վարութեան

Փետրվ. 6 թուով [Ե. Ե.] Թէհրանից
յայտնուած են, որ պիւր գիշերուան Անգլ և
Ռուս պետականները յանձնեցին մի գորու-
թիւն կառավարութեան Ռուսները յայտ-
նում են, որ եթէ պարսիկները կտան Էջս
Եւհի թաշկը, ներումն կշնորհին նորա
մարդկանց, ապա Ռուսները Աստորապի
իրենց կօնսուլի միջոցով կյայտենն Էջս
Եւհին թողնել Պարսկաստանը:

Ըստ անգլիական տեղեկութեանց, Պարսիկները
սիրով ընդունել են այս պայմանները և
համաձայն են վճարել նորա թաշկի կէտը
50000 թուման, վերջինի Սալար-է-Գոյ

լի և Հոս-էս-Սալթանի մասին եղած դատաւճիռները և յետ վերջինը նոցա սեպ-հակառակութանց զրաւման մասին եղած որոշումները, եթէ նրանք կ'ընդունեն Պարս կաստանը:

Պ. ՄՈՌՆԵՐԸ ԵՒ ՓԻՆՇԵՄԵՐԸ

Բրիտանի 7 փետր. (Ճ. Տ.)

Gazette լրագրի տեղեկութեան համաձայն, Ֆինանսների մինիստրութիւնը ստացել է մի ընդարձակ հեռագիր պ. Մոռնարից, Պարսկաստանի նոր ընդհ. գանձապետից, (Բիզիւսի) այն արտաքին կարգի անկանոնութեան մասին, որի մէջ գտել է նա Պարսկական Ֆինանսները և նոյն հեռագրով յայտնում է յայտնի արտաքին մեքենայութեանց մասին:

ՌՈՍՏԵՐԸ ԶՈՐԻՆ ՌԻՏԵՐԸ

Ս. Պետրոպոլ 7 փետր. (Ճ. Տ.)

Աստարաբատի Ռուսական հիւպատոսը հեռագրում է այդտեղի իշխանութեանց՝ լուրջ անկարգութեանց, սպանութեանց և կողոպուտների մասին Մազանդարանի սահմաններում, որոնք էքս-Ջահի և կառավարութեան կուսակիցների իրար դէմ մղած կռիւների պատճառով վերածուել են կատարելապէս անիշխանութեան:

Հետեւաբար Աստարաբատ են ճամպուած երկու գունդ հեռակա զօրքեր, երկու դաշտային և երկու լեռնային թնդանութներով, մինչդեռ մի գունդի էլ կարգադրուած է երկու լեռնային թնդանութներով մեկին, զէպի Բարձրուշ և մի այլ գնդի էլ, որ ուղևորուի զէպի Մէշէզքեր:

The Times Weekly Edition-ից

ՄԵՃ ՄԱՐԴԻԿ

Ամերիկացի հաշակաւոր միլիարդեր — բարեգործ Կարնեգին, որի նուիրած բազմապատիկ միջոցներով շատ գրադարաններ և այլ կրթական հաստատութիւններ են հիմնուել իւր հայրենիքում և որ նորերս դարձեալ միլիոններ նուիրեց համաշխարհային խաղաղութեան մեծ գործի զարգացման համար, իւր ծննդեան եօթանասուն և չորսերորդ տարեդարձը կատարելով՝ շնորհաւորութեան եկած մասուլի ներկայացուցիչների ձեռքն է տուել քսան անունների մի ցուցակ, որոնց նա համարում է անցեալի ամենամեծ մարդիկը: Այս առթիւ անգլիական Review of Reviews թերթի խմբագիր լայտնի Վ. Ստէքլը հարիւրի մօտ նամակներ է ուղարկել զանազան նշանաւոր անձանց և շատերից ստացել այն քսան անունների ցուցակը, որոնց նոքա համարում են ամենից մեծ մարդիկ, կամ կարծիքներ Գարնեգիի հրատարակած ցուցակի և այն մասին, թէ ինչպիսի մարդոց պէտք է մեծ համարել: Պատասխան ուղարկողներից 16 հոգի անգլիախոս են և 9 հոգի ուրիշ ազգութիւններից. ուստի հասկանալի է, թէ ինչո՞ւ նոցա որոշած մեծ մարդոց շարքում շատ ընդարձակ տեղ են բռնում անգլիական ծագումն ունեցողները: Այնուամենայնիւ այս հարցապնդումը շատ հետաքրքրական խորհրդածութիւնների նիւթ է տալիս:

Բոլոր ստացուած ցուցակներն ի մի ձուլելուց յետոյ, ստացուում են մօտ 150 մեծ մարդոց անուններ, որոնցից ամենաշատ ձայն ստացող 21 անունները հետեւեալներն են.

1. Շէկսպիր, նոր ժամանակի ամենամեծ բանաստեղծը 21 ձայն
2. Կոլումբոս, Ամերիկան գտնողը 16 ,,
3. Յուլիոս Կեսար, Հռոմ. մեծ զօրավարը 14 ձայն
4. Նիւտոն, ժամանակակից աստղագիտութեան հիմնադիրը 14 ձայն
5. Գուտենբերգ, տպագրութեան հիմնադիրը 14 ձայն
6. Դանդէ ժամանակակից բանաստեղծութեան հայրը 13 ձայն

7. Դարվին, նոր գիտութեան հիմնադիրը 12 ձայն
8. Սոփիէնսըն, շոգեշարժի հիմնադիրը 11 ձայն
9. Հոմերոս, նախնի բանաստեղծութեան հայրը 9 ձայն
10. Բուգրա, Բուգ-կրօնի հիմն. 9 ,,
11. Արիստոտէլ, լոյն մեծ փիլիս. 9 ,,
12. Միքէլ Անջելօ. Իտալացի մեծ նկարիչն ու քանդակագործը 9 ,,
13. Փրանկլին, էլէքտրական ուժը գտնողը 9 ձայն
14. Արաբհամ Լինկոլն, Ամերիկ. Միաց. նահանգ. երեսի նախագահը 9 ձայն
15. Մովսէս, Հին ուխտի օրէն. 8 ,,
16. Սոկրատէս, լոյն փիլիսոփայ. բարոյախօսը 8 ձայն
17. Ս. Պողոս, քրիստոնէութեան առաջնաւորը 8 ձայն
18. Աւատ, շոգեմեքենաների հիմնադիրը 8 ձայն
19. Կոնֆուցիոս, Չինացի փիլիսոփան և կրօնի հիմնադիրը 7 ձայն
20. Կարլոս Մեծ, արդի եւրոպական պետութեանց առաջին հիմնադ. 7 ձայն
21. Լուտեր, բողոքականութեան առաջնաւորը 7 ձայն

Սոցանից երկու հոգի միայն քաղաքական-դինուորական հանձարի ներկայացուցիչ են՝ Յուլիոս Կեսար և Կարլոս Մեծ. հինգ հոգի կրօնի ներկայացուցիչներ՝ Մովսէս, Կոնֆուցիոս, Բուգրա, Ս. Պողոս և Լուտեր. երկու հոգի լուսնական փիլիսոփաներ՝ Սոկրատէս և Արիստոտէլ, երեք բանաստեղծներ՝ Հոմերոս, Դանդէ և Շէկսպիր, երեք մեծ գիւտ անողներ՝ Գուտենբերգ, Սոփիէնսըն և Ուատ. երեք գիտութեան ներկայացուցիչներ՝ Նիւտոն, Փրանկլին և Դարվին. Ամերիկան գտնուելու համար մեծ մարդ է հռչակւած Կոլումբոսը, իսկ զուտ իւր մարդկային արժանաւորութիւնների համար՝ Արաբհամ Լինկոլնը:

Հարկու տարբեր արդիւնք կստացուէր, եթէ ցուցակներ ուղարկողների մէջ գերակշռողներ լինէին Գերմանացիներ կամ Փրանսիացիներ. տարբեր էթէ գերակշռէին ղեգարուեստի, քաղաքական աշխարհի կամ գիտութեան ներկայացուցիչներ: Արդէն ուղարկուած ցուցակների մէջ շատ աչքի է ընկնում տեսակէտների մեծ տարբերութիւնը: Ումանք իրաւամբ հարցնում են. արդեօք մեծ պէտք է համարել նոցա, որոնք իրենց ներքին արժանիքներով, հոգու և հանձարի մեծութեամբ, բարոյական լատկութիւններով են աչքի ընկել, թէ նոցա, որոնց կեանքն ու գործը մեծ նշանակութիւն և մեծ արդիւնք է ունեցել մարդկութեան համար: Եւ նայելով թէ այս տեսակէտներից որին առաւելութիւն են տալիս ցուցակ կազմողները և իրենց մեծ մարդոց կէտից աւելին նոր ժամանակի գիւտեր անողներ են, այսինքն այնպիսի մարդիկ, որոնց շնորհիւ նա միլիոններ է վստակել, բայց չկալ ոչ մէկը, որ ձեռք բերեց առաջ ապրած լինի: ոչ մի փիլիսոփայ, ոչ մի կրօնական անձն, իսկ ընդհանուր 150 անձանց ցուցակի մէջ ուրիշայայտնի մեծ մարդկանցից Մուհամեդ ստացել է 6 ձայն, Նապոլէօն՝ 5 ձայն, Ալեքսանդր Մեծ՝ 5 ձայն, Գէօթէ՝ 5 ձայն, իշխուել է միայն մի կին՝ Յովհաննա Դ. Արկ. և ուսաններից լիշուել են իրրւ մեծ մարդիկ մի մի ձայնով՝ Պետրոս Մեծն ու Տալտոյը:

Յամենայն դէպս այսպիսի հետախուզութիւններն ունին իրենց մեծ արժէքը այն տեսակէտից, որ ինչպէս Կարլայլն ասում է. «Տիեզերական պատմութիւնը, այն ամենի պատմութիւնը, ինչոր մարդիկ կատարել են այս աշխարհում, ըստ հու-

թեանալ մեծ մարդոց պատմութիւն է, որ այստեղ գործել են»:

Պէտք է ուրեմն տշխատել ճանաչել այդ մեծ մարդոց և հասկանալ նոցա գործը:

Հնքերցով

ՕՐԵՆՔ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻՍ

Մեր ռուսական հիմնական օրէնքներում ասուած է, որ դաշնագրութիւնները օտար պետութեանց հետ կապուում են բարձրագոյն կառավարութեան միջոցով: Ինքնրատիւնեան հասկացում է, որ այդ դաշնագրութիւնները պէտք է համապատասխանեն բարձրագոյն կառավարութեան գործողութիւններին և չեն կարող օրէնսդրական ընդլ կրող ակտեր լինել: Այդ կարգը մեր հիմնական օրէնքներում երևան է գալիս, թերևս, ոչ միշտ ցանկալի պարզորոշութեամբ, բայց այնուամենայնիւ նա պարզուած է այդ օրէնքներում որոշ հետևողականութեամբ: Տարադրաբար մեր պրակտիկան օգտուում է անորոշութիւնից՝ իվնաւ այն պարզորոշութեան ու հետևողականութեան, որ պատասխանում է օրէնքների բուն իմաստին:

Վերջերս Ռուսաստանը Եսպանիայի հետ դաշն կապեց պարանքային ուղղակի հաղորդակցութեանց մասին՝ ռուսական ու եսպանական երկաթուղային ու շոգե-նաւային գծերի վրայով: Սոյն համաձայնութեան երկրորդ յօդաւորում ասուած է. «Երկու կառավարութիւններն ևս պարտաւորոււմ են անհրաժեշտ դէպքում ձեռք առնել բոլոր օրէնսդրական միջոցները»:

Մենք չենք խօսի Եսպանիայի և եսպանական կարգերի մասին: Սակայն մեզ համար ուշագրաւ է, որ պ. Ներատովը՝ ստորագրելով այդ դաշնագիրը, պարտաւորոււմ է ռուս կառավարութեան անուանից անհրաժեշտ դէպքում ձեռք առնել բոլոր օրէնսդրական միջոցները, որոնք հարկաւոր կլինին այդ դաշնագրութեան իրականութեան մէջ գործադրելուն:

Օրէնսդրական միջոցները Ռուսաստանում, օրէնքով, անցնում են օրէնսդրական հիմնարկութեանց ձեռով: Կառավարութեանը լայտնի չէ օրէնսդրական հիմնարկութեանց այժմեան և լեռազայ կազմերի կամքն ու ցանկութիւնները: Մինիստրութիւնը լիազօրւած չէ պարտաւորեցումներ անել կամ խոստումներ տալ՝ օրէնսդրական հիմնարկութեանց միջոցով այս կամ այն օրէնսդրական միջոցներով ձեռնարկելու մասին: Այսօրի նախ պարտաւորեցումներ անել կամ նման խոստումներ տալ կարող էր միայն ևեթ այն կառավարութիւնը, որը, օրէնքով իրաւունք կունենար տէր համարելու իրեն նաև օրէնսդրական շրջանում: Պ. Ներատովի Եսպանիայի նկատմամբ լանձնառած պարտաւորութիւնը համազօր է այն բանին, որ ռուսական կառավարութիւնը փաստական և իրաւական հնարաւորութիւն ունի ազդելու օրէնսդրական հիմնարկութեանց վրայ այնպէս, ինչպէս ինքը կցանկանալ, և քաջ տալ նրանց իւր լեռնից այնտեղ, ուր որ իրան հաճելի կլինի:

Մինչդեռ, իսկպէս, ոչ միայն օրէնքով, այլ և փաստապէս (ինչպէս ցոյց տուեց Ա. Ստոյկալիի հետ տեղի ունեցած կոնֆլիկտը) մինիստրութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունի օրէնսդրական հիմնարկութիւններին քաջ տալ իւր լեռնից իւր մտադրած ուղղութեամբ:

Օտար պետութեանց հետ դաշնագրութիւնների հաստատելիս կարելի չէ օրէնսդրական հիմնարկութեանց վրայ պարտականութիւն դնել ձեռնարկելու այս կամ այն օրէնսդրական միջոցները, որոնք կառաւարկւեն նրանց՝ կառավարութեան կողմից: Այն ինչ պարտաւորեցումներ լայտնի կամ խոստումներ անել օրէնսդրական հիմնարկութեանց անունից — այդ

համարեա նոյնն է եթէ ասենք՝ դաշնագրութիւն հաստատել օրէնսդրական հիմնարկութեանց անունից: Դաշնագրութիւն օրէնսդրական հիմնարկութեանց անունից — դա մի կոմբինացիա է, որ, գուցէ, լարմարում էլ է մեր իւրատեսակ ռազմա-դրական կարգերին, բայց հազիւ թէ նա մի բան աւելացնի մեր գիպլոմատիայի դափնիների վրայ: Դաշնագրութիւնը իւր այն կետում, ուր խօսուում է օրէնսդրական հիմնարկութեանց վրայ գործ գրւելիք ճնշման մասին, ներկայանում է իրաւականօրէն մի ոչինչ բան. և Եսպանիայի հետ կապւած դաշնագրութեան երկրորդ յօդաւոր, որի մէջ պ. Ներատովը իւր ստորագրութեամբ վաւերացրել է ռուս կառավարութեան պարտաւորութիւնը անհրաժեշտ դէպքում բոլոր օրէնսդրական միջոցները ձեռք առնելու մասին՝ չունի ոչ մի իրական նշանակութիւն: Սակայն նա, անկասկած, կարող է ունենալ իւր գործնական նշանակութիւնը: Օրէնսդրական հիմնարկութեանց վրայ կարող են ճնշում ու ազդեցութիւն գործ դնել՝ հիմնուելով այն հանգամանքի վրայ, որ լուսաւորւած օրէնսդրական միջոցի ընդունումը նախատեսուած էր Եսպանիայի հետ կապւած դաշնագրութեան մէջ: Անհրաժեշտ է պահպանել Ռուսաստանի վարկը, որ միշտ սրբութեամբ է կատարել իւր միջազգային պարտականութիւնները, եւ իրաւի, հայրենիքի վարկը պէտք է պահպանել: Բայց այստեղ օրէնսդրական հիմնարկութեանց առաջ հանդէս է գալիս մի շատ ծանր խնդիր. Ռուսական վարկի պահպանումը չէ հաշտոււմ այն բանի՝ պահպանութեան հետ, որը մեր դիպլոմատիան անզգոյշ ու չմտածուած կերպով խոտանում է կամ պարտաւորւում է կատարել Ռուսաստանի անունից: Ռուսական վարկի ձեռնարկ պահպանումը այս դէպքում զուգադիպում է այն բանի պահպանման, որը հակասում է մեր շահերին, այսինքն Ռուսական վարկին — ըստ հուստեան:

«P. C.»

ԿԱՄԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ազատ է մարդու կամքը թէ ոչ», ահա մի հոգե-փիլիսոփայական հարց, որ երկար ժամանակ վիճելի է եղել և ներկայումս էլ հրապարակի վերայ է և չէ ստացել իւր վերջնական լուծումը:

Հարցի լուծման զիջաւոր գծաւորութիւնը կայացել և կայանում է նորանում, որ այնպիսի հեղինակաւոր անձինք, ինչպիսիք են, Սպինոզա, Դու, Հորսիս և այլք, հաստատում են որ եթէ կամքը ազատ լինէր, բարոյագիտութիւնը, իրաւաբանութիւնը, դատաւարականութիւնը և այլ գիտութիւններն առաջ գնալ, զարգանալ չէին կարող: Իսկ ուրիշ հեղինականների մի ամբողջ շարք՝ ինչպէս Զոպէն-Հասու էր, Էմանուէլ Կանտ, Հեգել և ուրիշները՝ ապացուցանում են, թէ եթէ գիտութիւնը և քաղակրթութիւնը այնպիսի ահռելի զարգացողութեան են հասել, ապա այդ շնորհիւ նորա, որ մարդը ազատ է եղել, որ ազատ է նորա կամքը:

Ուրեմն մենք տեսնում ենք մի հարց, որը շատ սերտ կապ ունի համամարդկային քաղաքակրթութեան ընդհանուր առաջխաղացութեան հետ, որը մեր բոլորիս նպատակն ու իդէալն է կազմում: Ուրեմն

չ' Յօդուածի այս երկրորդ մասի մանրամասնութիւնները աւելորդ համարեցինք այստեղ դնել. քանի որ դրանք ծառայում են նոյն իրական սկզբունքի պաշտպանութեան, ինչ որ քաղաքական առաջին մասում: Ծ. Թ.

և վատ չէր լինի, եթէ համաձայն մեր
պիտանքի, ընդհանուր գծերով պարզաբանե-
լինք այդ երկու մեծ ուղղութիւններէն, այն
է՝ ինքնատիրականութիւնը, այսինքն կամ
պատուութեան կողմնակիցները և դեմադ-
րականութիւնը — կամքի ազատութիւնը բա-
ցատու չէր — ընդհանուր տեսակետները
Սկսեմք առաջիններէն, որոնք ապացուցա-
նում են կամքի ազատ լինելը, հիմնուած
զուտ հոգեբանական-բարոյագիտական օ-
րէնքներէ վերայ:

Շտապեալագի թոմաս Ռիզան ասում
է. «Եթէ ուզում էք իմանալ ազատ է կամ
չէ զի մէջէք ձեր ինքնաձայնարութեան
և դուք կհամոզուէք, որ ազատ էք
մի որեւիցէ գործ կատարելու մէջ՝ ինչ
ուղղութեամբ որ ցանկաք: Եթէ ձեզ մո-
տեցնում են երկու նշանաւոր գրաւորներ
և առաջարկում են ընտրել մէկն ու մէկը
անշուշտ գուցէ ընտրում էք առանց ու-
շադրութեան, պատահաբար ո՛րը որ կընտրէ:
Այստեղից զուտ հոգեբանական տեսակե-
տից պարզ է. որ ընտրութիւնը կատար-
ւում է ազատ, որ չկայ մի ուրիշ զրգոյ
ոյժ, որ ուղղութիւն տար ձեր գործողու-
թեանը: Պարզ է, որ ձեր կամքը գործից
առանց մի որեւէ շարժառիթի, ուրիշի և
նա ազատ է հակառակ գործը կատարելու
միտնոյն պայմաններում: Այստեղից հա-
կանայի է որ կամքը մի գործ կատարելու
ժամանակ, եթէ չէ ենթարկուած արտա-
քին այլ պայմաններէ, հետեւեալ բոլորովին
ազատ է, և ուրիշ մարդը ինքնուրոյն
ու ազատ է մի բան գործելու:

Աւելի զօրեղ կերպով է հրապարակ
հանում կամքի ազատութիւնը այն ժամա-
նակ, երբ խղիւղին նայում ենք զուտ բա-
րոյագիտական կողմից: Եւ ահա թէ ինչ-
պէս: Մենք գիտենք որ մարդը իր անհա-
տական գործունէութեան ժամանակ միշտ
պատասխանատու է լինում իր ամեն մի
քայլին: Որովհետեւ երբ նա մի վատ
բան է անում, ամեն կողմից պատարակում
են նորան և նա ազդուելով այդ վերա-
բերմունքից, աշխատում է խոստովել նոյ-
նանման գործ կատարելուց: Եւ ընդհա-
կառակը լաւ գործ կատարելիս արժանա-
նում է գովասանքի, որը իրեն մի առան-
ձին հոգեկան բաւարարութիւն է պատ-
ճառում: Իսկ եթէ մենք ընդունենք որ
կամքը ազատ չէ, որ ինքնուրոյն կերպով
ոչ մի գործ չէ կարող կատարել, որ բոլոր
արարմունքը արդիւնք է մի ինչ որ կողմ-
նակի ոյժի, ապա մարդը մի մեքենայ պիտի
լինի ու գործի մեքենայօրէն, ուրիշի և
ուրիշները իրաւունք չպիտի ունենան
արհամարհանելով կամ գովասանքով վերա-
բերուելու նորան: Իսկ եթէ մենք պատա-
խանատու ենք մեր ամեն մի գործած քայ-
լին, ուրիշի և պիտի ազատ լինենք ու ա-
զատ լինի մեր կամքը:

Երբորդ ապացոյցը, որ կամքը ազատ
է, կայանում է հզօր և մարմնի փոխա-
դարձ արարութեան մէջ: Յայտնի փաստ
է, որ մարմինը ոչ մի մասնակցութիւն
չունի հոգեկան (կամքի) գործունէութեան
մէջ, որ հոգին (կամքը) այն գործի գլխա-
ւոր ստիղծող ոյժն է կազմում, որով և
մարդս առաջնորդում է: Վանան

[Կարուճակութի]

ԳՐԱԿԱՆ ԳՈՅԺ

Մեզ ուղարկուած «Անահիտ»-ի 9-12
միացեալ համարները բերում են մի ծա-
նրոյ քաջութիւն: Արշակ Զօպանեանը, մինը հայ
գեղարուեստական գրականութեան ան-
նշխար մշակներից, հեռանում է այլ ևս
գրական ապարդիւցից և գաղափարներ
մեծ համբաւ ստացած իւր «Անահիտ»
Ազգային, գրական, գեղարուեստական
ամսագրութի հրատարակութիւնը:

«Անահիտ»-ը լոյս է տեսել ամբողջ 12 տ.
և այն էլ բացառապէս Զօպանեանի լա-
մաւ աշխատանքի ու անհատական ձեռնե-
րէցութեան շնորհիւ, Զօպանեանի, որ տո-

կացել նիւթական անհատ գրականներէ:

Նորա, որոնք մօտ են եղել մեր ըն-
թացիկ գրականութեան և հոգեկան ու-
ժաւոր կապ են պահել հմտօրէն խրմ-
րաբար «Անահիտ»-ի հետ, նորա, ա-
սում ենք, կարող են խորապէս զգալ թէ
ինչ է կորցնում հայ ազգային գրականու-
թիւնը «Անահիտ»-ի դադարմամբ:

Գաղափարներով «Անահիտ»-ը, կարող
խմբագրել վերոյիշեալ միացեալ համար-
ներ 228-240 երեսներում տալիս է
Գ. Ժ. Ժ. տարեշրջանների ցանկը:

Բաւական է միայն նայել այդ երկու
ցանկի բազմաբնույթի նիւթերին և
հիշել, որ եթէ, միայնօրէն կատարուած
հսկայ աշխատանքի վրայ:

Հայ կեանքը սակաւ է արտադրում այդ-
պիսի եռանդուն և իւր ցեղի ընդունակու-
թիւններով ոգևորուած՝ մանրակրկիտ աշ-
խատող, այնքան բեղմնաւոր ու գաղափա-
րակիչ իւր գործունէութեան ընթացքում:
Միայն «Անահիտ»-ի հրատարակութիւնը
չէ, որ պատուաւոր տեղ է տուել Զօպանե-
անին մեր գրական աստղերի շարքում:
Նա նշանաւոր է և իւր լուրջ տեսու-
թիւններով (որոնց դէմ կարելի է վիճել
և հակակարծիք լինել) հայ իրականու-
թեան մէջ տեղի ունեցած երևութիւնների,
մասնաւոր հայ գաղափարները:

Այդ տեսութիւնները նա միշտ տուել
է իւր «Անահիտ»-ում «Քրոնիկ» վերնագրի
տակ: Զատ պատրաստուած, բարձրագոյն
լուրջ իրութեան տէր անձինք անգամ
անձկանալով կապուելին՝ թէ երբ կգայ «Ա-
նահիտ»-ը բերելու իւր «Քրոնիկ»-ը, որի
մէջ փայլում էին Զօպանեանի քաղաքա-
գիտական հասկացողութիւնը, անկախ ու
ինքնատիպ մտածողութիւնը և համոզիչ
գնահատումները: Աւելի մանրամասնու-
թիւններ ցանկացողին՝ կմտնան շէնք
կարգով օր. «Անահիտ»-ի 7-8 համարների
«Քրոնիկ»-ը (ուրուագծային նօթերը):

Այսքանից յետոյ, հասկանալի է ու-
րեմն այն ծանր տպաւորութիւնը, որ
թողեց մեզ վրայ Զօպանեանի գրական
ասպարէզից հեռանալը:

«Անահիտ»-ի 9—12 միացեալ համար-
ները սկսում են Զօպանեանի մի գեղեցիկ,
բայց տխրաւոր իր հրաժարականով, որ կը-
րում է «Հուսկի Բանք» վերնագրով:

Մի գաղափար տալու համար մեր
ընթերցողներին «Անահիտ»-ի կատարած
գերի մասին, մենք անհրաժեշտ ենք հա-
մարում «Հուսկի Բանք» — Զօպանեանի,
այսպէս ասած, մանիֆէստից-առաջ բերել
այն տողերը, որոնցով լայնում է, թէ
երկոտասանամեայ իր «Անահիտ»-ին
նպատակ էր ունեցել:

Ահա այդ նպատակը Զօպանեանի իր
իսկ խօսքերով.

1. Նպատակ մեր ազգային գաղափար
ամենէն բնական, ամենէն յստակ,
ամենէն վսեմ ձևովը լուծում
գտնելուն:
2. Մեր ազգին մէջ ցեղային ինքնա-
սիրութեան և ինքնաձայնարու-
թեան զգացումը զօրացնել, իր գո-
լութեան իսկ սպառնացող վտանգ
ներով պաշարուած ցեղի իր գի-
րքին բերմամբ՝ «ցեղային» պաշտ-
պանութեան հարցը ամեն ուրիշ
հարցէ վեր դնելու ձգտումը ամ-
րացնել մեր մէջ:
3. Զափաւոր, խոհական, ճշգրտան ու
գրական ազատամտութիւնը որ
մեր ցեղին աւանդական ոգին է
եղած՝ պահպանել, փոխանակ ծա-
րայիչ ու ցնորական ազատամտու-
թեան մը հոսանք քաջաբերելու:
4. Մեր ազգային եկեղեցւոյն՝ իբր
մեր ցեղապահպան մեծ ուժերէն
մին և մեր մտաւոր կեանքի սա-
տարներէն մին՝ դեռ մինչև ցարդ
ունեցած կարեւորութիւնը շեշտել
և գայն փոքրացնել ու գործնական
դէմ մաքսուել:
5. Մեր ցեղին անցեալին մէջ կա-

տարած պատմական, գրական, ու
գեղարուեստական գործը ամբող-
ջականօրէն երևան հանելու ա-
նպատակ:

6. Մեր նոր գրականութեան ու նոր
լեզուին ներացման, ճոխացման,
ընդլայնման, կատարելագործման
օժանդակել, ու մասնաւորապէս
մեր գրականութեան մէջ՝ «ցեղա-
յին» նօթին զօրացման պետքն
զգացնել:

7. Օտար գրականութեանց ամենէն
ճշմարտապէս գեղեցիկ և անկորըն-
չելի գլուխ-գործոցներու խնամոտ
թորգմանութեամբ մեր գրակա-
նութիւնը հարստացնել, ու ա-
րեւմտեան կողմի քաղաքակր-
թութեան շարունակելով հանգերձ
միշտ տալ նախապատուութիւն,
մեր նոր սերունդներուն ուշադ-
րութիւնը հրաւիրել մեր մէջ տա-
րորեանպէս անտեսուած արեւել-
եան հին մեծ գրականութեանց
վրայ, սրունցմէ իբր արեւելցի ցեղ
մենք շատ բան ունինք օգտուելու:
Մէկ բառով այս թերթը ցանկա-
ցած է կրցածն ընել որպէս զի հայ
ցեղն ըլլալ հեռագետէ աւելի գի-
տակից իր ինքնութեան, իր ուժե-
րուն և իր պատմական գերին և
աշխարհի թափառաբանին վրայ
հետզհետէ աւելի հզօր, փայլուն
և ինքնագործ կերպով կատարէ
այդ գերը:

Եւ կարելի է ասել որ մեր գրական
քրոնիկատակ մշակ Զօպանեանը 12
տարուայ ընթացքում կատարել է իր ըմ-
բանած գերը, կատարել պատուով, հե-
րոսաբար տանելով նիւթական ծանր
տաքնապներ և զսհ բերելով իւր առող
ջութիւնը:

Թերթը գաղափարներով, յստակի որո-
շումը՝ «նա տուել է հենց վաղուց քա-
յալուած առողջութիւնը վերականգնելու
նպատակով, առողջութեան, որ ստիպել է
նրան ամեն ծաւալից լոգնութենէ, մա-
նաւանդ ամեն սրտնեղութենէ գերծ կեանք
մը վարել...»:

Ցանկանում ենք հազուադէպ հայ
գրական վաստակաւորին արագ ապաքի-
նում և դարձ գէպի իր փայտայած ա-
պարէզը:

Ա. Տ. Վ.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԿՍՑՈՒԹԻՒՆԸ

Մի քանի ամիսներ առաջ շատ խառն
և ալիկոծ էր Ատրպատականի գրութիւ-
նը: Երջուներ, կողոպուտներ, ասպատա-
կութիւններ, աւազակութիւններ, ապրա-
տամբութիւններ ու գիւղերի աւերում
ներ ամեն ուրեք, ահա Ատրպատականի
ապրած օրերը ամիսներ առաջ:

Չէր քաջացած էր զաւառներէն և
կեղանից Թաւրիզը — Ատրպատականի մայ-
րաքաղաքը: Ընդհատուած էր պատի յա-
րաբերութիւնը, հեռագրի գործունէու-
թիւնը և թաղաւորում էր մի տեսակ ան-
ստուգանքի: Զկարկանդակաւոր կառավա-
րութիւն: Թաւրիզը իր շրջապատից գուրս
չունէր ոչ հեղինակութիւն և ոչ իշխա-
նութիւն: Այս պատճառով հայերը կե-
ղեքում և վաւերում էին Դարպալքից,
անխիղճ խաների ձեռքից գաւառներում
արեւմտքում էր լինում թուրք գիւղացին
և առ հասարակ իշխում էր կամայակա-
նութիւնը և նոր բուսած բռնաւորների
բռնկեցը: Ղարաբաղի խաները ալա-
թալանի հարսանիք էին բռնել, որովհե-
տեւ ոչ տէր կար և ոչ տիրական՝ սահման
գնելու նրանց անսահման շահատակութիւն-
ներին: Խօյ — Սալմաստ — Մաքու և այլ գա-
ւառներ անխիղճ խանութեան ձեռք անհա-
գիտ քրքերի համար:

Զկար ոչ վաճառականներ ճամբոր-
դութիւն, տիրող անապահովութեան շը-

նորհիւ և ոչ ապրանքների փոխանակու-
թիւն, ի հետեւան որի կանգ էր առել
վաճառականութիւնը, երկրի կենդանու-
թեան երակը, ուստի և պատու էին սնան-
կութիւնների չարագույնակ լրեր:

Ատրպատական այդ մաշիչ օրերին,
Դեկտեմբերեան ամիսն ու անհեռաւոր
գէպերից լետոյ, Թաւրիզ մտաւ Զօլա-
էդ-Դօվլէն և այդ մուտքը հզաւ գաւառ-
ներում կարգ ու խաղաղութիւն վերա-
կանգնելու ազգանշան: Նորա խիստ ու
օրինապահ բնաւորութիւնը, որ յայտնի
է ամենքին, անմիջապէս չափ ու սահ-
մանի մէջ գրեց ամեն տեսակ բռնաւոր-
ների և անհանգիստ տարրերի Այժմ այլ-
ևս մենք չենք լսում Եւստիանների ար-
շաւանքների, քրքերի ասպատակութիւն-
ների, գիւղատէրերի կեղեքմանց, շուրջ
Աւրմեան կապուտ կողոպուտի և այլ կար-
գի աւերումների ու շահատակութեանց
մասին, որովհետեւ ամեն տեղ պաշտօնի
գլուխ են կանգնած Եւստիան-Դօվլի իր
մարդիկ և տիրում է կեդրոնացման ու-
ժեղ սրտեմ: Դադար առած վաճառակա-
նութիւնը սկսել է շունչ առնել, գործում
են պատերն ու հեռագրերը և երկիրը
նոր-նոր մտնում է իր նօրմալ ու խաղաղ
վիճակի մէջ, որովհետեւ իշխում է Եւստի-
ան-Դօվլի ուժեղ ձեռքը և ձայն ու ծրագ-
րունները կտրել են երէկուայ առիւծ և
ինքնազուլու գաւառ խաները:

Թէ և մեր ուրոյն և անգամ տրա-
մագծօրէն տարբեր կարծիքն ունենք Զօլա-
էդ-Դօվլի կառավարական եղանակի նը-
կատմամբ, այնուամենայնիւ փաստ է և այդ
առանց ճշմարտութեան գէմ մեղանշելու
կարելի է ասել, որ երբեմնի անխիղճա-
կան և բազմիշխան Ատրպատականը
այժմ մի և սաստաղօրէն տէր և չքացել
են այլևս երկիրը խռովող նախկին բռնա-
պետիկները:

Միակ վայրը, ուր ըմբոստութիւնը
թէ առած թռչում էր, ուր խաներն ի-
րենց լիազօր էին զգում և մոռացել էին
խիղճ ու Աստուած, այդ Ղարաբաղն էր,
որտեղից գալիս էին հրահեռած հայ գիւ-
ղերի, առեւանգուած հայ կանանց լացի
ու օգնութեան աղերսները: Շնորհիւ այն
հանգամանքի, որ Զօլա-էդ Դօվլէն Ղա-
րաբաղի նահապետի էր կարգել լաւ
թղթիւնատարտորի համբաւ հանած Ռաշիդ
օյ Մօլլա Սարգսիւնի, Ղարաբաղի ևս այս
վերջերն սկսել է մասամբ խաղաղել:

Ինչպէս լսում ենք, Սարգսիւն ար-
դէն Թաւրիզ է բերել տուել Բէյվանի բո-
րենի Քեարթմ խանին, որին արգելք տակ
պահելու համար առաջադրութիւն էր ա-
րել առաջնորդ կարգաւոր Եպիսկոպոսը,
մինչև Ղարաբաղից հայ գիւղացից գալը
և գաղափար սկսուելու նայնպիսի առաջադրու-
թիւն է եղել Դժգոյնի գաւառի հայ գիւ-
ղերն աւերող Արգուլ Սոմադ խան և
Ռոստոմ խան եղբայրների մասին, որոնք
դեռ իրենց օրերումն են գտնուում:

Ճանապարհների ապահովութեան,
վաճառականութեան թեման ընդլայնման և երկր-
րի խաղաղացման գործում պակաս չեն
խաղում և Ռոստոմի գործերը, որոնք
կեդրոնացում են Խօյում, Թրքո-Քրդական
սահմանի անվերջ շահատակութեանց վայ-
րում: Այդ սահմաններում, ինչպէս ասում
են, մարդու զրուխը այս մասիկ անցեա-
լում սոխի գին չունէր, այժմ այլ ևս
յուզկաշարների և ասպատակողների կող-
մից մարդկային կեանքի դէմ այդպիսի
երկրորդի չկան, որովհետեւ խաղաղու-
թիւն են պահպանում երկրի բնակիչները
արթուն պահապանները:

Խալալաղութիւն, ահա թէ ինչի է
կարօտ այս դժբախտ երկրի աւելի գրե-
թախտ ժողովուրդը: Եւ թո՛ղ խաղաղու-
թիւն ու գարուն օրեր բերեն ուժեղ ձեռ-
քերը հիւանդ այս երկրի կորացած, լըբ-
ուած ու սովալլուկ մեր ժողովրդին, մենք
սիրով կողջունենք նոցա: Մենք քանկա-
նում ենք զօրեղ հաստաքուն իշխանու-
թիւն և խաղաղ օրեր, լոգնել ենք արդէն
մշտական խռովութիւններից և կեանքի
անապահովութիւնից:

ԹԱԼԻՐԻԶ

Փետրվար 2-ին, Հինգշաբթի օրը, ս. պատարագից յետոյ, կայացաւ Վարդանանց տանի Հանգէսը Արամեան գաղթի թափառարարութեան Սոփոկան երգերից և ոտանակներէր արտասանութիւնից յետոյ, ուսուցիչ պ. Վահանը արտասանեց Ահարոնեանի Ուսումնական թիւնն արձակ քանակեցութիւնը: Տեսուչ պ. Ս. Վարդանանցը ասաց աւուր պատշաճի մի ծառ: Ապագային պարտականութեան զգացումը իբրեւ միջոց ազգային ինքնագոհականութեան բնաբանով: Հանգիսից վերջ պ. տեսչի խնդրանքը առաջնորդ Վարդանանցը արագանը խօսեց ոգեւորիչ մի ծառ, տանի միտքը և նախնեաց հաւատքի ջոճը բացատրելով: Հանգիսի անցումը, զորով, բացատրեց և քիչ թուով երիտասարդներ, ցրուեցան զոհաբերութեամբ:

Տեսուչ պ. Վարդանանցը ասաց աւուր պատշաճի մի ծառ: Ապագային պարտականութեան զգացումը իբրեւ միջոց ազգային ինքնագոհականութեան բնաբանով: Հանգիսից վերջ պ. տեսչի խնդրանքը առաջնորդ Վարդանանցը արագանը խօսեց ոգեւորիչ մի ծառ, տանի միտքը և նախնեաց հաւատքի ջոճը բացատրելով: Հանգիսի անցումը, զորով, բացատրեց և քիչ թուով երիտասարդներ, ցրուեցան զոհաբերութեամբ:

Փետրվար 3-ին առաջնորդարանում թեմ. խորհրդի նիստ չի կայացել, որովհետեւ հրաժարուել էր անդամակցութիւնից պ. Սմբատ Մելիք Սարգսեանը: Քանի որ վերջ սրբապանին յաջողուել էր պ. Ս. Սարգսեանի հրաժարականը յետ վերցնել տալ, որից յետոյ, ըստ սովորականին, փետր. 15-ին աւուր թեմ. տեղի է ունեցել թեմ. խորհրդի նիստ:

Թեմական խորհրդի ընտրուած անդամներ են Մելիք Սարգսեան Սմբատ, Առեփանեան Ստեփան, Ժամհարեան Սեդրակ, Մելիք Անդրէասեան Պատրոս, Տէր Զովհաննիսեան Նիկոլ և Անանեան Վահան: Այս կողմից, հանգուցեալ Մելիք Անդրէասեանից յետոյ, պահանջու է Ստեփանեան, մեր առած տեղեկութեամբ պ. Ժամհարեանն էլ հազիւ ամբողջ ասարուայ մէջ մի նիստի է յաջողի գալ: Ըր հաշուած պ. Տէր Զովհաննիսեանին, որ և՛ քարտուղար է, և՛ անդամ և միշտ առաջնորդարանում, այդ զեպքում մեր ունեւում ենք Թեմական խորհրդի դուռ երկու անդամներ պ. Մելիք Սարգսեան և Անանեան Վահան: Այս պատճառով կարծում ենք համեմատել կրկին այն կրիզիսը, որ տիրում է առաջնորդարանում: Կրիզիս զրամի, կրիզիս փողովի, կրիզիս ապարանի...

Մեզ հաղորդում են, որ պ. Ջերայի Բազադեանը արքայազն Իմամ Ղաֆի Միրզին 30 տարով վերցրել է Ուրմիջ լճի շահագործութեան և նաւարկութեան իրաւունքը: Լուրս ենք, որ պարտքը պիտի պատրաստել տայ նոր նաւամատոյցներ և արդէն պատուէր է տուել նոր շոգեմակայներին: Կարելի է միայն յաջողութեան ցանկալ այդ բիւկոտ ձեռնարկին, որից այնքան խուսափում են մեր միւս վաւ ծառականները:

Արամեան գաղթի հոգարարութեանը Տէր Հմայեակի ձեռնամբ, իբրեւ եկեղեցապետական սեպհականութեան, պահանջմամբ ստացաւ Ղալա թաղի 6 զոյգ քանդուած դարպասները, որոնք գտնուում են թաղի եկեղեցի շրջափակում:

Լուրս ենք դատ է յարուցուած ազգային իշխանութեան կողմից՝ յետ դրաւիւս այն հոգեւոր, որոնք գտնուում են մեր հանգստարանի պարսպից դուռը, զեպի բոլորներէր կողմը և որից ցարդ օգտուել են թուրքերը: Այդ գործին հետամտելու և դատը արտապահելու պարտականութեանը Ղալայի հոգարարութեանը, առաջնորդի հաւանութեամբ, յանձնել է իշխալ Տէր Հմայեակ քահանային:

Քաղաքային հիւանդանոցի բժշկական տեսչութեանը որ ցարդ գտնուում էր բժ. պ. Ս. Տէր Սարգսեանի ձեռքում, այս վերջերս Ռուս. հիւպատոսի յանձնարարութեամբ Զօջաէգ Դովիէն յանձնել է իւր հրաւարական յաջող համարում:

Երեկ՝ Կալիստի բժ. պ. Վահան Դեղագործին:

Փետրվ. 12-ին, կիրակի, պատարագին առաջնորդ Կար. Եպիսկոպոսը մի աղբու քաղցր մարութեան ներքին մաքրութեան և անհատական ուժերի զարգացման մասին Այն դասը, որ հաղորտանում է սովորաբար իւր «եկեղեցադպրութեամբ», ինչպէս միշտ այդ պէր ևս բացակայում էր ժամից: Քարոզի մէջ առանձին շեշտելով գրպի տեղ էր բռնում այն հասարակական անտարբերութիւնը որ երևան է բերում հայ ժողովրդը ոչ միայն կրօնական խնդիրներում, այլ և կոյտուրական մեր բոլոր հիմնարկութիւններին շուրջը:

Հաջի Զօջաէգ-Դովիէն նախկին ոստիկաններին փոխարինել է փոխնիստով, որոնք կրում են նոր ձեւի համազգեստներ:

Թաւրիզի Ռուսական բանակի 5-րդ պոլկի գնալու պատճառով՝ հիւպատոսարանում ամօրոյ 12-ին ծառ տրուեց մեկնող օժիցիներին: Նուաբում էր Ռ. Ջին երեսփոխան մեր: Մեկնողներին նշնպիսի ճաշ են տուել մնացող 6-րդ և 8-րդ պոլկի օժիցիները: Մեզ հաղորդեցին, որ ամսիս 14-ին 5-րդ պոլկը սկսեց Թաւրիզից ելնել:

Անդրեանի հիւպատոս պ. Երայի գնացել է Կ. Պոլիս որպէս անդամ այն յանձնարարի, որ պիտի զբաղուի Պարսկա-Թուրքական սահմանի վէճի կարգադրութեամբ:

Թրանսական հիւպատոս պ. Նիկոյան, որ մի տարի արձակուրդով բացակայ էր, սպասուում է որ այս շաբաթ վերադառնայ Թաւրիզ իւր պաշտօնին:

Գերմանական հիւպատոսական Ա. գեներալ Զուլեմանը գնացել է Գերմանական անձնական գործով:

Անգլիական հիւպատոսարանը կառավարում է (հիւպատոսի բացակայութեամբ) փոխ հիւպատոս 2-րդ Ստիֆենսը:

Թաւրիզի ռուսաց նախկին Բաշկիր բաշին, պր. Սարգիս Յոսեանեանը, նշանակուել է Ելք. Թուրքիայի Կարադաշի գիւղերի կառավարիչ և գտնուում է Ահարում:

ԱՏՐՈՒՄԱՆԿԱՆ

Ղաթաղաղ

Ելի շարունակում են ստացուել առաջնորդարանում գանգատներ Ղաթաղաղի հայ զեպիցից: Առաջնորդը քանիցս այդ առթիւ առաջադրութիւններ է տրել Սարգար Ռաշիդ օր. Մօլթին, որ զայլ այդ կողմից, մանուաւ Բէյվանի խմբին և Ռուսում խան Արդուր Սամազիան եղբայրներին: Կարգադրուել է նոր խաները զան Ահարատուելու, առաջնորդարանից նշանակուած են հաւատարմատարներ՝ Եղբայր Թուրքեանեանը նոր կառավարիչ պ. Սարգիս Յոսեանեանը և Զահեդի բէգը:

Սարմաս

Այս վերջերս որ մի տեսակ ահարկում էր տեղի ունեցել Սարմասում, այժմ, զրեթէ, այնտեղ կեանքը մոտում է իւր նորմալ վիճակի մէջ: Բացում են հետզհետեւ փակուած դպրոցները: Մի քանի ռուսացիներ, որ վաղուց ամրացել էին այդ թշուառ գաւառում, արդէն հեռացել են և ունեցում են միակ ցանկութիւնն է նրանց վերադարձը այլ ևս բնաւ չտեսնելու: Հաւթուանի գիւղերը, հակառակ առաջնորդարանից ուղարկուած նաւակների և ազգարարութեանց, չեն ուղարկում թեմ. ժողովի կողմից նշանակուած առաջնորդական տուրքերը: Առանձնապէս յատուում է ինքը Հաւթուան մեծ և հարուստ գիւղը որ կամեւում է վճարել սրբանից 30-40 տարի առաջ որոշուած գումարը: Նրա կատուում են մի թոյլերի զրգուցիկ, որոնք վարկարկում են Հէնց իրենց առաջ քաշած և պատգամաւորացրած մարդկանց որոշումները:

Ուրմի

Ազգային գործերը անկախութեամբ, զեպի բոլորում, զարդոցները անապահով, չկայ գործակալական խորհուրդ չկայ լուրջ

քահանայ, որին գործ կարելի լինէր վստահել և առ հասարակ յուսահատութեան, ահա հայկական իրականութիւնը Ուրմիում: Եթէ ճիշտ լինի այն յուրը, որ ռեժիմը խորագրանի ցոյժով դպրոց է բացել մի գիւղում և այդպիսով իր ստիպել զիւրացող դաւանափոխ լինել: Այդ զեպքում բոլորովին համեմատելի կլինի թե ինչ արհաւիրքի է մասնուած այդ գծաղղ գաւառը: Ուսուցիչները զիւրերում մնացել են առանց ռափնների, թրովհետեւ գիւղացիք չեն մըտածում ոչ դպրոցի, ոչ ուսուցչի և ոչ կրթութեան վրայ:

Խօյ

Հին կարգերի վերականգնումը երկուցի է մասնել հայերին, որոնք վախում

են նորանոր վրէժինդրութիւններէր: Այդ շրջանից նամակներով խնդրում են Կարապետ կալիստոսից յանձնարարել իրենց Հէյդար խան Ամիր Թուրքեանին, որ ցարդ Մակուսին էր գտնուում և որը, արդէն, ժամանել է Խօյ: Իր ծամբորդութեան ժամանակ առաջնորդը ծանօթացել էր Մակուսի Հէյդար խանի հետ, օգտուելով այդ ծանօթութիւնից, առանց պաշտօնական ձեւականութեանց զիմելու, սրբազանը զրեց պատշաճ նախակի տեղական հայերի պաշտպանութիւնը ինքրեկով նրանից:

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ“

Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Ամեն շաբաթ ստացում են Եւրոպական. առաջնակարգ ֆարերկաններից ամենաճոխ նորութիւններ կալաններին և արդ ու զարդի վերաբերեալ:

Տիկնիկներ չԵՄԵՐ—պալտօներ, մահմար. շալ և բատիստ, կարուած և կիսակար քուզներ իւպկաններ և ամեն չափի կորսէթներ:

ՊԵՐՈՆՆԵՐԻ ՉԵՄԵՐ—սէզօնի և կիսասէզօնի պալտօներ 50—120 դրան. կաստիւմներ 70—120 շրն. ըրզնկիսթ 60 դրն. ից, շալվար 14—15 դրն. ֆանթէզի ժիլէթներ 17—45 դրն. շապիկների, քօշերի, մանչէթների և քրավաթների մեծ քօլեքցիա:

ՏԳՆԵՐԻ ԿԵՍԵՐԻՄՆԵՐ 4—10 տարեկան 20—35 դրն. ԵՂՆԻՍԵՐԻ ՉԵՄԵՐ 3—10 տարեկան 25—60 դրն.

Դիւրի սանդղների և սարքերի, ընդիրքիւնների, փօրամանների և պալտօների մեծ քօլեքցիա, խաչեր, խաղալիքներ ամեն տեսակի և ամեն արժէքի լիքօրի կարնիթիւրներ, սեղանիկներ թէյի և պալիրտի համար ծալովի, փէշմենի, կանֆէթի և վարենիի հրաշալի վագեր. երեխաների ծալովի կառքեր և աթոռներ, սեղանի կիթնիկա արշինով և հատով, ամեն լայնքի և կիթնիկա կրծկալ երեխաների. սենեակի և կօրիզօրի համար լինօլթօն Զառաշկայ սէզօնի օրմոցու հրաշալի կտորներ և քուզացու:

ՌԵՍՈՐՏԵՐԻ կանացի մահմար և մետաքս գլխարկներ, որոնք վաճառում են սովորականից 50 % զեղջով. տեսում է միայն 15 օր, շտապեցէք օգտուել հանգամանքից:

Դաւառներից պատուէրներ կրնդունի և ամենայն խնամքով կրկատարի և քանակութեան համաձայն արժէքներ կտայ:

ՄԱՆՈՒԿ ՄԱԶՄԱՆԵԱՆԵՐԸ

ԿԱԼԵԱՍ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Ալէքսանդրապօլում և Թիֆլիսում յայտնի մեր պատրաստած և մեծ ընդունելութիւն գտած կալթաթով: Թաւրիզում (Ղալա թաղում) արդէն բացել ենք գործարան, որտեղից ամեն օր պատրաստուում և արտադրուում են միանգամայն թարմ կալթաթ, ալոլիտոն, ալախկա, վիչինա եւ այլն:

Ունինք Ռուսաստանում պատրաստուած ամեն քիտակի խմիչքներ չափաւանց մատչելի գներով, որպիսիք չէր գտնի ոչ մի մաքաղիւնում: Ունինք իսկական կալիթրու և այլ տեսակի ընտիր զինիւնը, որոնք չեն ծախուում Թաւրիզի գինիների առասպելական թանկ արժէքներով: Թարմ գարեջուր և ամեն տեսակի ռուսական գալիուսկեղաններ: Ծախուում են և կիթիկներ, աժան սարդիւններ, եկէք և գնեցէք թարմ, աժան և ընտիր ալրանքներ և զուր մեզ չէր մոռանայ: Կալթաթի ռուսական ֆունտը 30 կ. (35 շահի) մեր գործարանը լուսանելիար Ստեփան Ստեփանեանի նոր խանութներում, Պ. Սիլիօնի տան մօտ, բողոքականների աղօթարանի կողքին:

ԳԱՐՈՒՆԸ

ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ

ԳԱՐՈՒՆԸ

Հասարակութեան ուշադրութեանն է յանձնարարում ամեն մրցումից վեր, անապատեղի աժան գնահատուած իւր ընտիր ալրանքները, որ ստացուած են ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԵՍԵՆԻՑ. Ուլիսիները փոխում են ամենայայտնի ֆարերկաններից, վստահելի են և երաշխաւորութեան տակ: Մեր ունեցած և արագ սպառուող ալրանքներից բացի, այս օրիւս նոր ստացանք ԿԵՆՏԵՐ ԶԵԼԵՐ, ռուսամարանի (աշակերտահաց) ԶԵԼԵՐ, ԵՂՆԻՍԵՐ ՍԵՂԵՆԻՍԻՒՎ պապիրոսներ, ԹԳԹԻ ԼԵՊՏԵՐՆԵՐ (ֆանտուսներ), ԿԵՆՏԵՐ ԶԵՐՄԵՆԵՐԻՍԵՐ, պատրաստի փեմեր և սպին և այլն:

„ՀԱՆԴԵՍ ԱՄՍՐՅԱՆ“

Հայագիտական ռուսամատթերթ. 26-րդ տարի: Տարեկան քաժնեգրին է ամեն երկրի համար 15 ֆր., 6 րուբլի, 70 զլուրդ:

Հայագիտ. Rédaction de la Revue „HANDESS AMSORYA“ Vienne (Autriche), VII2 Mechtharistengasse 4.